



ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ
ԳԻՏԱԿԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ
ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)




ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԴԱՆ



«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ
ՊՂՆՁԱՄՈՒԼԻԲԳԵՆԱՅԻՆ
ԿՈՄԻՏԵԱՑ» ՓԲԸ



ԳԻՏԱԿԱԿԱՆ ԱՐՑԱԽ



SCIENTIFIC
ARTSAKH

НАУЧНЫЙ
АРЦАХ

Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.y-su.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻՎՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ
SCIENTIFIC ARTSAKH
НАУЧНЫЙ АРЦАХ

№ 1(2), 2019

«Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

The «Scientific Artsakh» journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).

Журнал «Научный Арцах» включен в список научных периодических изданий, приемлемых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных Высшим аттестационным комитетом Республики Армения (ВАК РА).

ԱԵԳՄՄ – UYSSA – ОМУСА
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2019

Հրատարակության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Рекомендовано к публикации решением ученого совета Ереванского государственного университета

Recommended for Publication by the Yerevan State University Academic Council Decision

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ

Լախագահ՝ Արամ ՄԻՄՈՆՅԱՆ ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեհմինա ՍԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Անդամներ՝

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խաչիկ ԳԱԼՍՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ
Զուլիետա ԳՅՈՒԼԱՍԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Կոստրոմա, ՌԴ)
Գևորգ ԴԱՆԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Արման ԵՂԻԱՉԱՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
Մարել ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Օլշտին, Լեհաստան)
Վալենտինա ԼԱՊԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Մոսկվա, ՌԴ)
Օտտո ԼՈՒԻՏԵՐՅԱՆՆԻ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Յամբուրգ, Գերմանիա)
Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Սուշել ՀՈՎՍԵՓՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գագիկ ԴԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վշոտ ՍԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Կարին ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Դոնի Ռոստով, ՌԴ)
Գարիկ ԲԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Տիգրան ԶՈՂԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 1(2), 2019, Երևան, ԱԵԳՄՄ հրատ., 2019, 480 էջ:

Scientific Artsakh, № 1(2), 2019, Yerevan, UYSSA publ., 2019, 480 pages.

Научный Арцах, № 1(2), 2019, Ереван, Изд. ОМУСА, 2019, 480 страниц.

«Գիտական Արցախ» պարբերականի 2019թ. 1-ին համարում տեղ են գտել հասարակական գիտությունների արդի հիմնախնդիրների վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունը, Արցախի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը, Իրանի Իսլամական Հանրապետությունը, Լեհաստանը, Շվեյցարիան և Ռուսաստանի Դաշնությունը ներկայացնող 50 անվանի ու երիտասարդ գիտնականների աշխատանքները:

In the first issue of the «Scientific Artsakh» journal in 2019 the works on topical issues of social sciences by 50 well-known and young scientists representing Republic of Armenia, Republic of Artsakh, Republic of Belarus, the Islamic Republic of Iran, Poland, Switzerland and the Russian Federation are published.

В первом номере за 2019-ый год журнала «Научный Арцах» опубликованы работы по актуальным проблемам общественных наук, авторами которых являются 50 известные и молодые ученые, представляющие Республику Армения, Республику Арцах, Республику Беларусь, Исламскую Республику Иран, Польшу, Швейцарию и Российскую Федерацию.

EDITORIAL COUNCIL

Chairman: Aram SIMONYAN, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member, Doctor of History, Professor

Editor-in-Chief: Avetik HARUTYUNYAN, Ph.D in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: Tehmina MARUTYAN, Ph.D in Philology, Associate Professor

Members:

Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor

Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor

David BABAYAN, Doctor of History, Associate Professor

Vahram BALAYAN, Doctor of History, Professor

Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor

Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Associate Professor

Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor

Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (Kostroma, Russia)

Julietta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor

Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor

Moushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor

Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor

Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor

Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor (Moscow, Russia)

Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (Hamburg, Germany)

Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor

Edik MINASYAN, Doctor of History, Professor

Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor

Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor

Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor

Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor (Rostov-on-Don, Russia)

Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Associate Professor

Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor (Olsztyn, Poland)

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: Арам СИМОНЯН, директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: Аветик АРУТЮНЯН, кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: Теймина МАРУТЯН, кандидат филологических наук, доцент

Члены:

Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор

Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор

Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор

Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент

Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор

Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)

Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, доцент

Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)

Джюльетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор

Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор

Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, доцент

Мареk ЖЕЙМО, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)

Гарик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор

Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор

Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор

Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор (Москва, Россия)

Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)

Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор

Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор

Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент

Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор

Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор

Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

Մարիամ Առաքելյան. Ուսանողների մեդիակոմպետենտության գնահատման խնդիրը անգլերենի իրավագիտական կողմնորոշման դասընթացում.....270
Mariam Arakelyan. The Problem of Students' Media Competence Assessment in the Legal English COURSES

Мариам Аракелян. Проблема оценки медиа-компетентности студентов на курсах юридического английского языка

Մանսուր Լարուի. Միջանձնային հարաբերությունների կառավարման արդյունավետությունն՝ ըստ սոցիոլոգիական հարցումների արդյունքների.....278
Mansour Larouei. The Effective Management of Interpersonal Relationships Based on the Results of Sociological Research

Мансур Ларуи. Эффективность управления межличностными отношениями согласно результатам социологических исследований

Համիդռեզա Կամիար. Մեծահասակների կրթության ռազմավարությունները.....285

Hamidreza Kamiar. Adult Education Strategies

Гамидреза Камиар. Стратегии образования взрослых

ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
LINGUISTICS, LITERATURE STUDY
ЛИНГВИСТИКА, ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

Հռիփսիմե Չաքարյան. Զաղաքի տարածական մոտիվը Հենրիկ Էդոյանի պոեզիայում.....292

Hripsime Zakaryan. The City's Spatial Motif in Henrik Edoyan's Poetry

Рипсиме Закарян. Пространственный мотив города в поэзии Генриха Эдоюна

Մերի Հովհաննիսյան. Հոմանիշների ոճական առանձնահատկությունները Վահան Տերյանի չափածոյում.....299

Meri Hovhannisyan. The Stylistic Peculiarities of Synonyms in Vahan Teryan's Speech Art

Мери Ованнисян. Стилистические особенности синонимов в поэзии Ваана Теряна

Սվետլանա Մանուչարյան. Կապան-Գորիս տարածաշրջանի խոսվածքների բայական համակարգերի համեմատական քննություն.....307

Svetlana Manucharyan. A Comparative Examination of the Verb Systems Of The Speeches (Dialects) of Kapan-Goris Areas

Светлана Манучарян. Сравнительный анализ категорий глагола в говорах региона Капан-Горис

Թեհմինա Մարության. Յեղասպանության արտացոլումը Սիմոն Սիմոնյանի ստեղծագործություններում.....322

Tehmina Marutyanyan. Some Issues on the Genocide in the Works by Simon Simonyan

Теймина Марутян. Отражение Геноцида армян в произведениях Симона Симоняна

ԿԱՊԱՆ-ԳՈՐԻՍ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ ԲԱՅԱԿԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՍԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ*

ՀՏԴ.81.282:811.19

ՍՎԵՏԼԱՆԱ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ

*ԱԵԳՄՍ անդամ, Գորիսի պետական համալսարանի հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատար, հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու, ասիստենտ, ք.Գորիս, Հայաստանի Հանրապետություն
smanucharyan81@mail.ru*

Կապան-Գորիս տարածաշրջանը՝ իբրև բարբառային գոտի, հատկանշվում է (ԼԻ)Ս և Ում ճյուղերին պատկանող խոսվածքներով: Այդ տարածաշրջանի բարբառային միավորների բայական համակարգերը քննել ենք համաժամանակյա կտրվածքում՝ համեմատական մեթոդի կիրառմամբ ներկայացնելով դրանց յուրահատկությունները: Ուսումնասիրության ենթակա խոսվածքներն ունեն մի շարք առանձնահատկություններ՝ ըստ խոնարհման հարացույցների ներկա ու անցյալ ժամանակաձևերի դրսևորումների: Կապան-Գորիս տարածաշրջանի բարբառային միավորները, ըստ անցյալ կատարյալի ժամանակախմաստի արտահայտման, կարելի է բաժանել երկու խմբի՝ համադրական կազմությամբ ու վերլուծական. վերջին խմբին դասվող խոսվածքներում բացակայում են ըղձական ու ենթադրական եղանակների անցյալի առանձին ժամանակաձևերը: Խնդրո առարկա խոսվածքները տարբերակվում են նաև ըստ հարկադրական եղանակի կազմության, արգելական հրամայականի արտահայտման, երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերի գործածության, ինչպես և անկանոն բայերի եղանակաժամանակային բարբառային տարբերակներով: Կապանի ԼԻՍ ճյուղի և Գորիսի խոսվածքների բայական համակարգերում գործուն են բոլոր եղանակային ժամանակաձևերը, իսկ Կապանի Ում ճյուղի մի շարք խոսվածքներում դրանք կիրառվում են իմաստային տարարժեքությամբ: Բարբառային նյութի քննությամբ նկատելի է, որ արդի ժամանակավիուում Կապան-Գորիս տարածաշրջանի խոսվածքները կարելի է դասակարգել ըստ բայական համակարգերի այն յուրահատկությունների, որոնք դիտարկել ենք իբրև խոսվածքային հատկանիշ:

Բանալի բառեր՝ Կապան-Գորիս տարածաշրջանի բարբառային միավորներ, համեմատական քննություն, խոսվածքների բայական համակարգեր, զուգադրական մեթոդ, խոսվածքային հատկանիշ, Ում և (ԼԻ)Ս ճյուղեր, բարբառային գոտի:

Կապան-Գորիս տարածաշրջանը՝ իբրև բարբառային գոտի, ըստ ձևաբանական միահատկանիշ դասակարգման, հատկանշվում է Ում և (ԼԻ)Ս ճյուղերին պատկանող խոսվածքներով: Այդ տարածաշրջանի բարբառային միավորների բայական համակարգերը քննել ենք համաժամանակյա հայեցակետով՝ համեմատական ու ներքին զուգադրական մեթոդների կիրառմամբ ներկայացնելով դրանց յուրահատկությունները: Հիշյալ տարածքային տարբերակների բայի անդեմ ու եղանակաժամանակային կազմությունները իմաստակառուցվածքային տեսանկյունից ունեն որոշակի ընդհանրություններ ու առանձնահատկություններ:

Դերբայներից, ըստ ձևախմաստային դրսևորման, ուսումնասիրվող տարածքային տարբերակներում ընդհանրական են անորոշն ու ենթակայականը: Անորոշը կազմվում

* Հոդվածը ներկայացվել է 30.04.2019թ., գրախոսվել՝ 15.05.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

Ե **-ել/-ի/ի և -ա/ւ** վերջավորություններով, օր.՝ *պըտահել(Կապ.)/պըղահիլ(Գոր.),*
կյնրթ ի և (Կապ.)/կարթելիլ(Գոր.), *քյն շ ի և (Կապ.)/քաշելիլ(Գոր.),*

խօսալ(Կապ.Գոր.)// խոսալ (Շնհ.), ըրվալ(Կապ.)/ըրելալ// յըրօվալ
(Գոր.)//իրելվալ(Վշ.,Տեղ)// յուրօվալ (Շնհ.,խոտ)// իւրօվալ (Յլծ.) և այլն: Ենթակայական
դերբայի **-օ/օ** դ-ով կազմությունները գործածվում են այդ տարածաշրջանի բոլոր
խոսվածքներում, օր.՝ *կըխօղ, հ ի մ ւ ն ճ օ ղ (Կապ.)/հըմանչօղ (Գոր.),* *քյն ճ օ ղ*

(Կապ.)/քանջօղ (Գոր.), *ըսօղ (Կապ.,Գոր.)// և ի ս օ ղ (Յլծ.),* իսկ **-ու/ու** դ-ով
տարբերակները (օր.՝ *վախուղ, և ի ս ու ղ, խոսմուղ*⁴⁹⁵), արդի ժամանակավիճակում

կիրարկում են միայն Շինուհայրի խոսվածքի տարեց բարբառախոսները: Ինչպես
Սյունիք-Արցախի բարբառներում, այնպես և քննվող խոսվածքներում վաղակատար ու
հարակատար դերբայներն ունեն համապատասխանաբար **-ա/ւ** և **-ա/-ւ**
վերջավորություններ, օր.՝ *կարթալ/կըղթացալ(Գոր.)// կյնրթալ (Կապ.),*

չուրացալ(Գոր.)//չըրացալ (Կապ.), կ ի թ ւ ն օ և այլն: Խնդրո առարկա խոսվածքները,

ըստ վերոնշյալ դերբայների կազմության, չեն տարբերակվում, սակայն դերբայներից
յուրաքանչյուրը, տվյալ տարածքային միավորներում ունենալով գործառնության
առանձնահատկություններ, խոսվածքային հատկանիշ է ձևավորում, որը
կներկայացնենք ստորև:

Եթե **-ու/ու** դ-ով անկատարն ընդհանրական է Կապան-Գորիս բարբառային
գոտու համար (օր.՝ *կյնրթում (Կապ., Արծ., Ագ.,Գ., Գղ., Դ.Բ., Աղ., Տ.,*
Սյ.)/կարթում(Գոր., Տղ, Բհ., Վշ., Տթ.),սիրում(Կապ.,Արծ.,Լշ.,Գ.,Դ.Բ., Աղ., Տ.,Խ.)//
ս ի թ ու ն (Յլծ.,Կրծ.,Շնհ.)// ս ու ղ ու ն (Գոր.,Վշ.,Տեղ,Խնծ.,խոտ), պերում (Շ.,Ծ.) //

պ ի թ ու ն (Գոր.,Վշ.,Շնհ.,Բհ.)// պ ու ղ ու ն (Կապ.,Արծ.,Ագ., Գ., Շշ.,Տթ.,Յլծ., խոտ), լըսում
(Կապ.,Արծ.,Ագ.,Դ.Բ.,Գոր.,Վշ.)//լիսում(Տթ.,Շնհ., խոտ), և ի ս ու ն (Յլծ.), ապա **-իս**-ով կամ

-ս-ով վերջավորվող բայածներն առկա են միայն Կապանի տարածաշրջանի **(ԼԻ)Ս**
ճյուղի խոսվածքներում (Եղվարդ, Ներքին Չանդ, Սրաշեն, Կաղնուտ), օր.՝ *ըսիս, քիս,*
կյնս, կեսս և այլն: **Ում** ճյուղի հիշյալ խոսվածքներում **գալ, տալ** բայերի **կյնմ, տամ**
տարբերակներում անկատարի **-ում**-ից հնչյունափոխության հետևանքով, կարծում
ենք, մտնում է **-մ**-ն⁴⁹⁶: Բարբառային այդ միավորներում ևս **-իս** վերջավորությամբ
դերբայը կիրառում են որպես անկատար երկրորդ կամ համակատար, օր.՝ *կյնլ -*
կյնլիս, հընդրել-հընդրելիս և այլն:

Խնդրո առարկա տարածքային տարբերակներում արտահայտության պլանում
կառուցվածքային տեսակետից տարբերվում է նաև ապակատար (ապառնի) դերբայը:
Միայն Եղվարդ, Կաղնուտ, Ներքին Չանդ և Սրաշեն գյուղերի խոսվածքներում այն

⁴⁹⁵ Տե՛ս **Սարգսյան Ա.**, Գորիսի բարբառը, Ե., 1975, էջ 185:
⁴⁹⁶ Տե՛ս նաև **Գևորգյան Գ.Գ.**, Չայրենի բարբառների եղանակաժամանակային
համակարգերի տարածագործառնական բնութագիրը, Ե., 2013, էջ 66-68:

բաղադրված է **-ական// -անքան** վերջնամասնիկից, ինչպես Ղարաբաղում և Հաղորդում (օր.՝ *մուտընական, մըն ական*), իսկ մյուսներում **-ու-նի**-ից, օր.՝ *պիրելու (Գոր., Տղ., Վշ.)// պի ի թիլնի (Շնհ., Խոտ), պիրուլու (Շ., Շշ., Ծ.)// պիրոնլի (Կապ., Արծ.), օւելու (Գոր., Աղ., Դ.Բ., Տ.) // օզոնլի (Կապ., Ագ., Արծ., Գ.), թի նանլի (Գոր., Վշ., Զշ., Հլծ., Խոտ, Շնհ.), քիւելու (Աղ., Դ.Բ., Տ., Սվ., Տթ.), թոնոնլի (Կապ., Ագ., Արծ., Գղ., Նշ., Ծ.)* և այլն: Նկատելի է, որ Կապան-Գորիս տարածաշրջանի **Ում** ճյուղի խոսվածքների բայական համակարգերի յուրահատկություններից է ապակատարի հնչատարբերակների ամկայությունը, որով բարբառախոսները հեշտությամբ զանազանում են միմյանց, քանի որ որոշ խոսվածքների բայաձևերում վերջավորության ձայնավորը ազդել է արմատականի վրա, և դրանք ենթարկվել են շրթնային ու քմային ներդաշնակության: Ըստ Ա. Ղարիբյանի՝ **-ական** վերջավորությունը, ավելանալով անորոշ դերբային, պետք է արտահայտի այդ դերբայի սեռական հոլովի գաղափար⁴⁹⁷:

Տարածքային տարբերակների համար *խոսվածքային հատկանիշ*⁴⁹⁸ կարելի է համարել նաև **-ա/ան վ-**ով վերջավորվող ընթացակցական դերբայի և դրանով հարադրված ժամանակաձևերի գործածումը, օր.՝ *տըսնելավ, քի նիլանլ ըս* և

այլն: Այն, իբրև անորոշ դերբայի գործիական հոլովաձև, կիրառական է քննվող բոլոր խոսվածքներում, սակայն իբրև ձևաբայ՝ անկա է ինչպես Ղարաբաղի ու Հաղորդի բարբառներում, այնպես էլ Կապանի **ԼԻՍ** ճյուղի բարբառային միավորներում: Այդ կազմություններն ընդունել են որպես անորոշի գործիական ձևեր՝ համարելով, որ դրանք «...զուտ որոշ բայերի բայական-բառային իմաստով պայմանավորվող մասնավոր դեպքեր են»⁴⁹⁹: Կարծում ենք, որ այն ճիշտ է միայն Գորիսի խոսվածքների տարբերակման համար, քանի որ դրանցում ընթացակցական դերբայից հարադրված ժամանակաձևերի կազմումը, իսկապես, սահմանափակ է: Նշենք նաև, որ ընթացակցական ներկա ու անցյալ ժամանակաձևերը, արտահայտելով գործողության տևականության և ընթացքի մեջ լինելու գաղափար, ինչպես Ղարաբաղի բարբառում, այնպես և Եղվարդի, Կաղնուտի, Ներքին Հանդի ու Սրաշենի խոսվածքներում կարելի է ընդունել որպես շարունակական ներկա (օր.՝ *մըտնելավ ըն*) և շարունակական անցյալ (*մըտնելավ ին*)⁵⁰⁰:

Ներկա ժամանակաձևերը խոսվածքներում ձևավորվում են միանման քերականական կաղապարով՝ **ձևաբայ+օժանդակ բայի ներկայի դիմաթվային խոնարհիչներ: Եմ** օժանդակ բայի ներկա ժամանակի **ա** դիմաթվանիշ ցուցիչը բնորոշ է քննվող տարածաշրջանի բարբառային միավորներին ընդհանրապես, իսկ մյուս դիմաթվային խոնարհիչները տեղայնացված բնույթ ունեն. **ե>է** հնչյունափոխությամբ տարբերակները (**եմ, էս, ա//ան, է(ն)ք, էք, էն**) գործածվում են Գորիսի խոսվածքներում, Կապանի Դավիթ Բեկում, Տանձավերում, Աղվանիում, **ե>ի** անցմամբ փոփոխակները (**իմ, իս, ա//ան, իք, ին**⁵⁰¹)՝ Շիկահողում, Շիչկերտում, Ծավում, Ուժանիսում,

⁴⁹⁷ Տե՛ս **Ղարիբյան Ա.**, Հայ բարբառագիտություն, Հնչյունաբանություն և ձևաբանություն, Ե., 1953, էջ 192:
⁴⁹⁸ Հասկացության մասին տե՛ս **Կատվայան Վ.**, Հայ բարբառագիտության հարցեր, Ե., 2014, էջ 120:
⁴⁹⁹ **Մարգարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 180:
⁵⁰⁰ Այդ մասին տե՛ս **Դավթյան Վ.**, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Ե., 1966, էջ 149, **Ղարիբյան Ա.**, նշվ. աշխ., էջ 182:
⁵⁰¹ **ե>ի**-ի հնչյունափոխության մասին տե՛ս նաև **Ղարիբյան Ա.**, նշվ. աշխ., էջ 169:

ճակատենում, Վաչագանում, Օխտարում, Ագարակում, իսկ **ե>ը**-ով տարբերակները (**ըմ, ըս, ա//ւն, ըք, ըք, ըն**)՝ Կապանի մյուս խոսվածքներում: Նկատելի է, որ օժանդակ բայի հոգնակի առաջին ու երկրորդ դեմքերի խոնարհիչները՝ **իք//ըք** «ենք» և **իք// ըք** «էք», ստեղծելով քերականական համանունություն⁵⁰², տարբերակվում են միայն խոսքաշղթայում: Հետազոտության առարկա բարբառային բոլոր միավորներում վերոնշյալ լեզվական կաղապարով ձևավորվում են ներկայի ժամանակաձևերը, այսպես՝ **անկատար՝ քիս ըս(եղ., Կղ., Ն.Հ., Ս.), տեսնում էմ (Գոր.,Վշ., Տթ., Բշ., Բջ, Հրթ., Կնծ., Դ.Բ., Տ., Աղ.), լ ի ս ո՞ւն մ** *էն(Հլծ.), սընում իմ // ըմ (Կաս.,Սյ.,Ուժ.,Ծ.,Վ.,Գ.,Գղ...),*

ապակատար՝ կիլական ըմ (եղ.,Կղ.,Ն.Հ., Ս.), ճ ի ր ի լ ի՞ն (Գոր.,Տղ.,Վշ.,Հլծ.,Շնհ.,Բշ.)//ճ

ի ր ի լ ի՞ն (Աղ.,Դ.Բ.,Տ.) //վ **ւն, վաղակատար՝ կերալ էք, ծընդրացալ ա, հարակատար՝**

քեցած ին//ըն (Կաս., Ագ., Արծ., Գղ.,եղ., Կղ., Ն.Հ., Ս.), **ընթացակցական՝պրծնելալ** *էն(Գոր., Տթ, Վղ., Հլ, Շնհ., Բշ.), լրսելալ ըք (եղ., Կղ., Ն.Հ., Ս.)* և այլն: Նկատելի է, որ քննվող խոսվածքների մեծ մասում օժանդակ բայից առաջ ապառնի ձևաբայի **ու** վերջավորությունը «...շրթնայնանում և վերածվում է «վ»-ի...»⁵⁰³, իսկ Գորիսի խոսվածքներում հանդիպում ենք նաև հավելական յ-ի՝ ձայնավորային հորանջը փակելու համար: Ինչպես որոշ բարբառներում, այնպես հետազոտության առարկա մի խումբ խոսվածքներում բացակայում են էական բայի անցյալի խոնարհիչները, ուստի դրանցում անցյալ ժամանակաձևերն արտահայտում են վերլուծական եղանակով կամ օժանդակ բայի բաղադրյալ ձևերով⁵⁰⁴, **լւն(լ)** ժամանականիշ մասնիկի

զուգորդությամբ: Ըստ անցյալ ժամանակի իմաստային տիրույթի՝ Կապան-Գորիս տարածաշրջանի բարբառային միավորները կարելի է պայմանականորեն բաժանել երկու խմբի: Առաջինին դասվում են այն խոսվածքները, որոնցում անցյալի ժամանակաձևերը ձևավորում են դերբայով և օժանդակ բայի անցյալի դիմաթվային ցուցիչներով: Այդ խմբին են պատկանում Գորիսի խոսվածքները, Կապանի Դավիթ Բեկ, Աղվանի ու Տանձավեր գյուղերի խոսվածքները, որոնցում էական բայն ունի **ի, իր, էր, ի(ն)ք, իք, ին** հնչյունափոխված ձևերը, նաև **(ԼԻ)Ս** ճյուղի խոսվածքները, որոնցում առկա են նույն ձևերը, բացառությամբ եզակի երրորդ դեմքի՝ **ա/ւն ր** և հոգնակի առաջին ու երկրորդ դիմաձևերի, որոնցում **ք**-ն նաև քմայնանում է՝ **իք/ թ**, օր.՝ *խօսում ի// իր// էր// ի(ն)ք// իք//ին* (Գոր., Տղ.,Բշ.,Վշ., Դ.Բ.,Աղ.,Տ.), *նըստիս ի//իր//ար//իք// իք / թ //ին* (եղ.,Կղ.,Ն.Հ.,Ս.): Այդ խոսվածքներում անցյալի վերլուծական մյուս ժամանակաձևերը կազմության նույն սկզբունքն ունեն, այսպես՝ **վաղակատար՝ տուվալ ի** (Գոր.,Վշ., Բեջ...), **լ ի ս ուն լ իր** (Հլծ.), *ասալ ար, փիղ ուն ց ուն լ իք/ թ* (եղ., Կղ., Ն.Հ., Ս.),

ապակատար՝ նըստըլական իր (եղ., Կղ., Ն.Հ., Ս.), *նըստելու յ/վին* (Գոր., Տղ, Բշ., Վշ., Սվ., Հլծ., Դ.Բ., Աղ., Տ.), **ընթացակցական՝ քինելալ ին** (եղ.,Կղ.,Ն.Հ.,Ս.): Երկրորդ խմբի խոսվածքներում անցյալի ժամանակաձևերը կազմվում են ներկա ժամանակաձևերի և **լւն(լ)** բառ-մասնիկի հարադրությամբ լեզվական կառուցատիպերով⁵⁰⁵, ընդ որում դիմաթվային գաղափարը փոխանցվում է օժանդակ բայի ներկայի խոնարհաձևերի միջոցով, ինչպես՝ *յէ ի՞ն մ ըմ լւն(լ), կօնում (Շ.,Ծ.)/կէնում (Ագ.,Արծ.,Գ.,Կպ.) ըս լւն(լ),*

⁵⁰² Օժանդակ բայի քերականական համանունության մասին տե՛ս **Գևորգյան Գ.**, նշվ. աշխ., էջ 78:

⁵⁰³ **Ղարիբյան Ա.**, նշվ. աշխ., էջ 190:

⁵⁰⁴ Այդ մասին տե՛ս **Ղարիբյան Ա.**, նշվ. աշխ., էջ 178, **Գևորգյան Գ. Գ.**, նշվ. աշխ., էջ 77:

⁵⁰⁵ Տե՛ս նաև **Գևորգյան Գ. Գ.**, նշվ. աշխ., էջ 79:

ըսած ըն ի ն (լ), ըշխդելու վըռք ի ն (լ) և այլն: Սահմանական եղանակի անցյալի ժամանակաձևերի նման դրսևորումները բնորոշ են Կապանի տարածաշրջանի բարբառային միավորների մեծ մասին, որոնցում երբեմն օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի ա խոնարհիչն ընկնում է⁵⁰⁶, օր.՝ *օտոււմ ի ն (լ), պերած ի ն (լ), ըրվալու ի ն (լ)* և այլն: Հավելենք, որ Շիկահողի, Ծավի ու Շիշկերտի ենթախոսվածքներում միայն տարեց բարբառակիրներն անցյալ անկատար ժամանակաձևն արտահայտում են հետևյալ քերականական կաղապարով՝ **-ու վերջավորությամբ ձևաբայ+օժանդակ բայի ներկայի խոնարհիչներ+ լ ն (լ)**, օր.՝ *ըրստիս ի ն (լ)* և այլն: Կարծում ենք՝ լեզվական այդ իրողությունը հիշյալ խոսվածքներում պայմանավորված է Մեղրու բարբառի ազդեցությամբ, որում ևս այդ ժամանակաձևը նույն կերպն ունի⁵⁰⁷: Ինչպես Գորիսի խոսվածքներում, եղվարդում, Կաղնուտում, Ներքին Հանդում ու Սրաշենում ևս նմանատիպ կաղապարային կառույցները՝ **ձևաբայ+օժանդակ բայի ներկայի դիմաթվային խոնարհիչներ+ լ ն (լ)**, ընկալվում են նախ՝ որպես բաղադրյալ ժամանակաձևեր, հետո՝ միայն պարզ, քանի որ և՛ **(ԼԻ)Ս** ճյուղի այս խոսվածքներում, և՛ Գորիսի բարբառային միավորներում գործուն են օժանդակ բայի անցյալի խոնարհաձևերը, ինչպես և **լինել** բայի **ինել/իլել** տարբերակը և պատմականորեն փոփոխություն կրած **լ ն (լ)** (<լեալ) բայաձևը, որոնք հարադրվում են նաև որոշ դերբայների՝ ձևավորելով երկրորդական բաղադրյալ ժամանակներ, օր.՝ *տըսիս ի ն (լ), մընասս ըմ ի ն (լ), քիս ըս ի ն (լ), տ ի ն ի ս ի ն (լ), կնսս ըք ի ն (լ), կնսս ի ն (լ)*

(*Եղ., Կղ., Ն.Հ.,Ս.*), *լիսելիս էմ ի ն (լ), քինսն իսսն ի ն (լ)* և այլն: Հավելենք նաև, որ «մնայիս ըս լ ն (լ)» տիպի կազմությունները Ա.Ղարիբյանը Սրաշեն գյուղի խոսվածքի համար ընդունել է որպես անցյալ անկատար⁵⁰⁸, սակայն ներկայումս տվյալ բարբառային միավորում նմանօրինակ քերականական կառույցը համապատասխանում է ոչ թե սահմանականի հիմնական, այլ երկրորդական բաղադրյալ ժամանակաձևին: Համաժամանակյա հայեցակետով **(ԼԻ)Ս** ճյուղի տարածքային այդ տարբերակներում էական բայի անցյալի խոնարհիչներով հարադրված ժամանակաձևերը գործառվում են միայն բարբառախոս տարեցների շրջանում, իսկ երիտասարդ բարբառակիրները **Ում** ճյուղի խոսվածքների ներգործությամբ կիրառում են **-ում**-ով ներկա ու անցյալ անկատար՝ «մոռացության մատնելով ներկայի ու անցյալ անկատարի սեփական կազմությունները»⁵⁰⁹:

Կապան-Գորիս տարածաշրջանի բարբառային միավորների համար խոսվածքային հատկանիշ կարելի է դիտարկել վաղակատար ու հարակատար դերբայներով ժամանակաձևերի, նաև անցյալ կատարյալի ձևախմաստային դրսևորումները: Եթե բացառենք բայերի հնչատարբերակների առկայությունը, ապա կառուցվածքային տեսակետից ներկա վաղակատարը նույնական է քննության առարկա տարածքային բոլոր միավորներում: Սակայն վերոնշյալ երկրորդ խմբի խոսվածքներում այն ունի անցյալ կատարյալի իմաստ: Կապանի տարածաշրջանի **Ում** ճյուղի այդ խոսվածքներում բացակայում է անցյալ կատարյալի համադրական ձևը, այսինքն՝ անցյալ կատարյալի իմաստը արտահայտվում է վերլուծական եղանակով՝ վաղակատարով և օժանդակ բայի դիմաթվային խոնարհիչներով, օր.՝ **յեկալ ըմ** «եկա»,

⁵⁰⁶ Տե՛ս **Միքայելյան Ժ.**, նշվ. աշխ., էջ 50:
⁵⁰⁷ Տե՛ս **Աղայան Է.**, Մեղրու բարբառը, Ե., 1954, էջ 200:
⁵⁰⁸ **Ղարիբյան Ա.**, նշվ. աշխ., էջ 172:
⁵⁰⁹ **Գևորգյան Գ.**, նշվ. աշխ., էջ 203:

ըրվացալ ա «երևաց» և այլն: Կարծում ենք, որ լեզվական այս իրողության դրսևորումը պայմանավորված է Մեղրու, Կարճևանի, Ագուլիսի կամ Ղարադաղի բարբառների ազդեցությամբ, որոնցում ևս անցյալ կատարյալի ձևեր չկան, բայց իմաստն առկա է, ինչն էլ արտահայտվում է ներկա վաղակատարով, այնինչ վաղակատարի իմաստը բացակայում է⁵¹⁰: Մեր կողմից պայմանականորեն առաջին խմբին դասվող բարբառային միավորներում՝ *Դավիթ Բեկի, Աղվանու, Տանձավերի, Կապանի ԼԻՍ* ճյուղի, նաև *Գորիսի խոսվածքներում, կիրառվում են և՛ ներկա վաղակատար, և՛ անցյալ կատարյալի համադրական ձև, այսպես՝ յեկը//յեկու «եկավ», յեկալ ա «եկել է», իրեվացիք «երևացիք», իրովացալ (Շնհ.)// նըրօվացյալ (Յլծ.)// իրեվացալ եք «երևացել եք» (Գոր., Տղ, Վշ., Բշ.), ըրեվացիր, ըրեվացալ էս (Դ.Բ.,Աղ., Տ.), ըրվաց, ըրվացալ ըս (Եղ.,Կղ.,Ն. Յ., Ս.)* և այլն: Նշենք նաև, որ Եղվարդի, Կաղնուտի,Ներքին Յանդի ու Սրաշենի խոսվածքներում ներկայումս զգալի է Կապանի տարածաշրջանի **Ում** ճյուղի բարբառային միավորների ազդեցությունը. վաղակատար ներկան կիրառում են նաև անցյալ կատարյալի իմաստով, այսինքն՝ դրանցում շարահյուսական մակարդակում առկա է քերականական բազմիմաստություն, իսկ անցյալ կատարյալի համադրական ձևը հանդիպում ենք միայն տարեց բարբառակիրների խոսքում: Այդ խմբի խոսվածքներում, ի տարբերություն երկրորդ խմբի տարածքային տարբերակների, գործառում են վաղակատար անցյալի ձևեր, օր.՝ *ք ի նացյալ//*

քացյալ ի (Գոր., Բեջ., Տղ, Խնծ., Վշ., Բշ.), *քեցալ ին*(Եղ., Կղ.,Ն. Յ., Ս.) և այլն:

Ի տարբերություն արդի գրական հայերենի, մի խումբ բարբառների, նաև Գորիսի խոսվածքների, որոնցում հարակատարով ժամանակաձևեր կազմում են միայն կրավորական ու չեզոք սեռի՝ գործողություն կատարողի վիճակ մատնանշող բայերով, Կապան քաղաքի, Ագարակի, Արծվանիկի, Գեղվա, Սյունիքի, Վաչագանի, Ուժանիսի և այլ խոսվածքներում գրեթե բոլոր բայերն ունեն հարակատարով ժամանակաձևեր, այսպես՝ *հըղրած ըս, ի փ ա՛ ծ ա՛ ա՛, տըսած ըմ լ ա՛ ա՛* և այլն: Յարկ է հավելել, որ, ինչպես

Ագուլիսի, Մեղրու, Ղարադաղի, Կարճևանի, Կաթավաբերդի և այլ բարբառային միավորներում, վերոբերյալ խոսվածքներում ևս հարակատարով կազմված հիմնական ժամանակաձևերն արտահայտում են և՛ հարակատարի, և՛ վաղակատարի իմաստ: Այս դեպքում կրկին քերականական մեկ ձևն ունի իմաստային տարարժեքություն, օր.՝

հըմբարած ա «հաշվել է, հաշված է», ասած ըք լ ա՛ ա՛(լ) «ասել էիք, ասած էիք»: Իսկ Կապանի տարածաշրջանի այն խոսվածքներում, որոնք ունեն օժանդակ բայի անցյալի խոնարհիչներ, զանազանվում են վաղակատար ու հարակատար ժամանակաձևերը, օր.՝ *կ ի ը ա՛ լ ա՛ր, կ ի ը ա՛ ծ ա՛ր* (Եղ.,Կղ.,Ն. Յ., Ս.), *նըստալ իք, նըստած իք* (Դ.Բ.,Աղ., Տ.)

և այլն: Եթե Գորիսի խոսվածքներում հարակատարով կառույցները սահմանափակ կիրարկություններ ունեն, ապա Կապանի տարածքային տարբերակներում գործառական տեսակետից հարակատարով հարադրված հիմնական ու երկրորդական ժամանակաձևերը հաճախական կիրառություն ունեն, ինչպես Ղարաբաղի ու Պոլսի բարբառներում:

Կապան-Գորիս տարածաշրջանի խոսվածքների բայական համակարգերում ըղձական ու ենթադրական եղանակների ապառնիի կազմավորումը նման է արդի գրական հայերենին՝ խոսվածքներին հատուկ եղանակաժամանականիշ ցուցիչներով, օր.՝ *ըղձ. ապ.՝ պիղցրա՛ննա՛ք* (Կապ.,Ագ., Արծ., Նշ...), *ին զի* (Գոր., Վշ., Բեջ., Բշ., Յրժ., Խնծ.), *մընաք, ենթ. ապ.՝ կըտըսամ, կըփընես* և այլն: Ինչպես Ղարաբաղի

⁵¹⁰ Տե՛ս **Ղարիբյան Ա.**, նշվ. աշխ., էջ 200:

բարբառում, այնպես և հետազոտության առարկա բարբառային միավորներում քերականական բազմմաստությունն ունեն ասացական բայերի ենթադրական ապառնին (օր.՝ *կասես(Գոր.)/կասիմ(Կապ.)*), երբ բարբառախոսն այդ ժամանակաձևը կիրառում է անցյալ կատարյալի փոխարեն⁵¹¹, օր.՝ *Լըհա վըր տըսալ ըմ յէկալ ա, կասիմ գի ըմվան մըհէնգ ա* «Չենց որ տեսա, եկել է, ասացի՝ պահը հիմա է» և այլն: Գորիսի

տարածքային տարբերակների, նաև Դավիթ Բեկի, Աղվանու, Տանձավերի, Եղվարդի, Կաղնուտի, Ներքին Յանդի ու Սրաշենի բայական համակարգերում առկա են այս եղանակների անցյալ ապառնի ժամանակաձևեր, օր.՝ *մընիք(Գոր.), կուտրատին, կիկի ըրիր, կըմուտանար //մօտ կի կանր* և այլն: Սակայն Կապանի

տարածաշրջանի բարբառային այն միավորները, որոնցում օժանդակ բայի անցյալի խոնարհման ձևերը բացակայում են, չունեն ըղձական, ենթադրական ու հարկադրական եղանակների անցյալի առանձին կազմություններ: Ըղձական ու ենթադրական եղանակների անցյալի իմաստը արտահայտվում է սահմանական եղանակի անցյալ ապակատար ժամանակաձևի միջոցով, այսպես՝ **փըռելու վըն լան(Լ)** նշանակում է «*քռնելու էին, բռնեն, կբռնեն*»: Բարբառային օրինակից նկատելի է, որ քերականական միևնույն կառույցը բազմմաստությունն ունի՝ համապատասխանելով երեք եղանակաժամանակաձևի, ինչը տարբերակվում է միայն խոսքաշղթայում, այսպես՝ **թան վըր իւրան լուելու վըս լան(Լ), հալբաթ տի չըս լան(Լ) ընելու** «Եթե նրան լսեիր, գուցե այդպես չէիր անի», **Տըսնաս քըզ ճ ինանչուլիւ վյան լան(Լ), վըր շեն հւմը տըսնալու վյա լան(Լ)**, «Արդյոք քեզ կճանաչեր, եթե գյուղում տեսներ», **Պա տա հիբ ըս լան(Լ) ըսելու** «Իսկ դա ե՞րբ էիր ասելու» և այլն: Իսկ Գորիսի խոսվածքներում և դրանց ազդեցությունը կրող Դավիթ Բեկ, Աղվանի, Տանձավեր գյուղերի խոսակցական տարբերակներում այս ժամանակաձևը մենիմաստ է և գործառվում է իբրև երկրորդական բաղադրյալ ժամանակ:

Կապան-Գորիս խոսվածքների բայական համակարգերի համեմատական բնության համար, կարծում ենք, էական են նաև հարկադրական եղանակի, ժխտական խոնարհման և երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերի արտահայտման ընդհանրություններն ու յուրահատկությունները: Եթե խնդրո առարկա **Ում** ճյուղի բարբառային միավորներում ներկայումս գործուն են ըղձականի ապառնիից և **պիտի** եղանականիչ բառ-մասնիկի **պի/ըտի(Կապ.)//պի/ետի (Գոր.)** հնչատարբերակներով կառույցները, ապա **ԼԻՍ** ճյուղի Եղվարդի, Կաղնուտի, Ներքին Յանդի ու Սրաշենի խոսվածքներում **բի/էդի** փոփոխակով ժամանակաձևերը, օր.՝ *պի/ըտի հըսնէ (Կապ.), պի/ետի հըսնի (Գոր.)//բի/էդի հըսնի (Եղ., Կղ., Ն. Յ., Ս.)* և այլն: Այս վերջին տարածքային տարբերակներում տարեց բարբառախոսները կիրառում են հիմնականում **բեղմա** եղանակիչով հարադրություններ, օր.՝ *բեղմա լըսիս, բեղմա լըսիր* և այլն, ինչպես և անցյալի կազմության համար առկա են անորոշ դերբայով և օժանդակ բայի բաղադրյալ ձևերով քերականական կառույցներ, օր.՝ *բի/էդի լըսիլ ա լան(Լ)* և այլն⁵¹²: Չետազոտության տարածաշրջանի միայն Գորիսի խոսվածքներին են բնորոշ հարկադրական եղանակի՝ անորոշ դերբայով և **պիտեմ//պետեմ** եղանակավորիչ բայով կազմությունները, ընդ որում՝ այս դեպքում խոնարհվում է եղանակավորիչ բայը, օր.՝ *ասլ.՝ պըղահիլ պիտեմ, անց.՝ պըղահիլ պետիք* և այլն: Կապանի տարածաշրջանի այն

⁵¹¹ Տե՛ս Դավթյան Կ., նշվ. աշխ., էջ 221:
⁵¹² Այդ մասին տե՛ս նաև Սարգսյան Ա. Յու., Շաղախի ենթաբարբառը Յադրութի ենթաբարբառի միջավայրում, Ստեփանակերտ, 2009, էջ 56:

խոսվածքներում, որոնցում բացակայում են ըղձականի ու ենթադրականի անցյալի առանձին ժամանակաձևերը, հարկադրականի անցյալն արտահայտում են **պի/ըտի** եղանակիչի և սահմանականի անցյալ ապակատարով, օր.՝ **պի/ըտի առնելու վ/ըմ լ'ն(լ)** և այլն, իսկ մյուս բարբառային միավորներում, նաև Գորիսի խոսվածքներում համաժամանակյա կտրվածքով երիտասարդ բարբառակիրները կիրառում են եղանակիչի և ըղձականի անցյալի հարադրությամբ քերականական կաղապարներ, օր.՝ *պետի հրեվար (Գոր., Տղ), պըտի ասիր(Դ.Բ.,Աղ., Տ.), բի/եդի լըտիք/ ը (Եղ., Կղ., Ն. Գ., Ս.)* և այլն:

Քննվող տարածաշրջանի բարբառային միավորների համար խոսվածքային հատկանիշ է հրամայական եղանակի բայաձևերի **-ա/ննք** դիմաթվանիշ թեթույթով⁵¹³ կազմությունները, որոնք առկա են **ա/նն** խոնարհման պարզ և **-ան** սոսկածանց ունեցող որոշ բայերի հարացույցներում, օր.՝ *հըսկա՛ցաք, յըտա՛ցաք, տ ի մ'նն՛ ցնն ը*

և այլն: Նմանատիպ ձևերը բնորոշ են Գորիսի Կորնիձոր⁵¹⁴, Խնձորեսկ, Զարաշեն⁵¹⁵, Տեղ, Յալիձոր, Յարժիս, Յարթաշեն խոսվածքներին, որոնցում **-ա/ննք** վերջավորությունը, կարծում ենք, համաբանությամբ տարածվել է նաև **է** խոնարհման պարզ և **ն** կամ **չ** սոսկածանցավոր որոշ բայերի վրա, օր.՝ *լ ի' սնն ը, քնն՛ ցնն ը,*

մըտա՛ք, թըռա՛ք և այլն: Իսկ Գորիսի ու Կապանի մյուս խոսվածքներում հիշյալ ժամանակաձևն ունի **-եք** հոգնակիանիշ վերջավորություն, այսպես՝ *լըտէ՛ք, մըտէ՛ք* և այլն:

Յետազոտության առարկա խոսվածքների բայական համակարգերի ժխտական խոնարհումը հատկանշվում է մասնիկավորմամբ՝ **չ**-ով, նաև **մի** և **ոչ** բառ-մասնիկների փոփոխակներով: Ժխտական **չ** մասնիկը տարածված է ինչպես հայերենի բարբառներում, այնպես էլ Կապան-Գորիս տարածաշրջանի խոսվածքներում: Այդ մասնիկով ժխտում են կատարում սահմանականի գլխավոր բաղադրյալ ժամանակների, ենթադրականի ժամանակաձևերի դեպքում, ընդ որում ժխտական մասնիկը դրվում է դերբային հետադաս օժանդակ բայի վրա, օր.՝ *ներկա՛ տեսնում չես (Գոր., Տղ, Զշ., Կշ., Աղ., Դ.Բ., Տ.), տըսնում չըս(Կապ.,Ագ., Արծ., Նշ....), տըսնիս չըս (Եղ.,Կղ.,Ս.,Ն.Գ.), անցյալ անկատ.՝ ասում չի(Գոր., Կապ.)//ըսիս չի (Եղ., Կղ., Ս.,Ն.Գ.), վաղակատար՝ մըծացալ չեն//չին//չըն, անցյալ վաղ. մըծացալ չիք(Գոր., Տղ, Զշ., Կշ., Աղ., Դ.Բ.,Տ.)// չիք/ ը (Եղ.,Կղ.,Ն. Գ., Ս.), հար.-վաղ.՝ խըմած ա, անց. հար. վաղ.՝ խըմած ա յ'նն(լ)(Կապ.,Ագ., Արծ., Գ., Կ., Ծ.) // խըմած չի (Եղ.,Կղ.,Ն. Գ., Ս.), ապակատ.՝ ըսելու չի/ըսըլական (Եղ.,Կղ.,Ն. Գ., Ս.) չի, անց. ապակատ.՝ ուտելու չիր(Գոր., Տղ), օտելու չըս լ'նն(լ)(Կապ.,Ագ., Արծ., Գ., Կ., Ծ.), ուտըլական չիր(Եղ.,Կղ.,Ն. Գ., Ս.)* և այլն: Ինչպես Նշեցինք, **չ** մասնիկը մասնակցում է նաև ենթադրական (պայմանական) եղանակի ապառնի և անցյալ ապառնի ձևերի ժխտականի դրսևորմանը, որը տեղի է ունենում անորոշ դերբայի հարադրությամբ, իսկ **չ**-ն ավելանում է դերբայից հետո դրվող էական բային, օր.՝ *ապ.՝ կիրիլ չըս//չես, անց. ապ.՝ կիրիլ չըս յ'նն(լ)(Կապ.)//կիրիլ չիր (Գոր., Դ.Բ.,Եղ.,Կղ.,Ն.Գ.,Ս.):* Քննվող տարածքային տարբերակների բայական համակարգերի մյուս եղանակաժամանակային ձևերի, բացառությամբ հրամայականի, ժխտումը կատարում են **վեչ** (Գոր. խոս.-ներ,Աղ.,Դ.Բ.,Տ.)//**վը չ** (Եղ., Կղ.,Ս.,Ն.Գ.)// **վե/ը չ**

(Արծ., Կպ., Ծ., Խտ., Ծ., Ագ.,Խղ.,Շշ.,Լ.,ՈւԺ.) հետադաս բառ-մասնիկով: Նշենք նաև, որ ի

⁵¹³ Դիմաթվանիշ թեթույթ կապակցությունը տե՛ս Գևորգյան Գ., նշվ. աշխ., էջ 117:
⁵¹⁴ Տե՛ս Գևորգյան Գ., նշվ. աշխ., էջ 145:
⁵¹⁵ Տե՛ս Մարգարյան Ա., նշվ. աշխ., էջ 196:

տարբերություն մյուս բարբառային միավորների՝ Գորիսի խոսվածքներում անցյալ կատարյալի և ըղծական եղանակի ժխտական կառույցներն ունեն դրսևորման երկու կերպ՝ **վերլուծական՝ վէչ**-ի հարադրությամբ, և **համադրական՝** ժամանակաձևին նախադաս չ-ով, ընդ որում չ-ով կազմությունը բացատրվում է արդի գրական հայերենի ազդեցությամբ, այսպես՝ *պըտմէցիր վէչ// չըպըտմէցիր, ըղծ. ապ.՝ հըսնէմ վէչ// չըհըսնէմ, անց. ապ.՝ հըսնիր վէչ// չըհըսնիր* և այլն⁵¹⁶: Աղվանի, Դավիթ Բեկ, Տանձավեր, Եղվարդ, Կաղնուտ, Ներքին Յանդ և Սրաշեն գյուղերի բարբառախոսները անցյալ կատարյալի համադրական ձևի ժխտումը կատարում են միայն հետադաս **վէչ**(Աղ.,Դ.Բ.,Տ.)//**վ ը չ**

(Եղ.,Կղ.,Ս.,Ն.Յ.)-ով, օր.՝ *նըստեց վէչ//վ ը չ, մըտար վէչ//վ ը չ* և այլն: Յուրաքանչյուր

խոսվածքում ըղծական ու հարկադրական եղանակաժամանակաձևերի ժխտումը արտահայտվում է դրական ձևերի և **ոչ**-ի փոփոխակների հարադրությամբ, այսպես՝ **ըղծ. ապ.՝ քինիմ վէչ//վ է / ը չ //վ ը չ, պէնամ վէչ//վ է / ը չ//վ ը չ, ըղծ. անց. ապ.՝**

կաղէլյու//պէնալու չըմ չիււ(լ) (Կապ.), *կաղնի վէչ//վ ը չ, ք / քիւ վէչ* (Գոր. խոս.- ներ)//*քինի վ ը չ* (Դ.Բ.,Աղ.,Տ.,Եղ.,Կղ.,Ս.,Ն.Յ.), **հարկ. ապ.՝ պի/ըտի քինի/էմ վէչ//վ է / ը չ,**

բէ/իղի քինիմ վ ը չ(Եղ.,Կղ.,Ս.,Ն.Յ.), *պի/ըտի հըվատ/դամ վէչ//վ է / ը չ*(Գոր., Կապ.),

բէ/իղի տըսնամ վ ը չ (Եղ.,Կղ.,Ս.,Ն.Յ.), **հարկ. անց. ապ.՝ պի/ըտի հըվըտ/դալու չըմ**

չիււ(լ) (Արծ.,Շ.,Կապ.,Ծ.,Ագ., Խդ., Շշ., Լ., Ուժ.), *բէ/իղի տըսնի վ ը չ* (Եղ.,Կղ.,Ս.,Ն.Յ.):

Գորիսի խոսվածքներում հարկադրականի ժխտական խոնարհման հարացույցը նման է դրականին՝ դրսևորվելով նաև եղանակավորիչ **պիտիմ** բայով կառույցի ժխտմամբ, օր.՝ **ապ.՝ պի/էտի տէսնամ վէչ, տէսնալ պիտէմ վէչ, անց. ապ.՝ պի/էտի տըսնի վէչ, տէսնալ պըտիք վէչ** և այլն: Տարածքային այդ տարբերակներում հարկադրականի ժխտման հարացույցներում հանդես է գալիս նախադաս չ-ն, որի գործառումը, կարծում ենք, կրկին պայմանավորված է արդի գրական լեզվի համընդհանրության միտմամբ, օր.՝ **ապ.՝ պի/էտի չըխօսի, խօսիլ չըպէտի, անց. ապ.՝ պի/էտի չըխօսիր, խօսիլ չըպէտեր** և այլն: Նկատելի է, որ եթե Կապանի տարածաշրջանի խոսվածքներից յուրաքանչյուրում հարկադրական եղանակի ժամանակաձևերի ժխտումն արտահայտվում է մեկ տարբերակով, ապա Գորիսի խոսվածքներում չորս, այսպես՝ գրական «**չպիտի կանգնեմ**» ձևի դիմաց Կապան-Գորիս բարբառային միավորներում առկա են համապատասխանաբար հետևյալ տարբերակները՝ **պի/ըտի կաղնէմ վէչ// վ է / ը չ**

(Արծ., Շ., Կապ.,Ծ., Ագ., Խդ., Շշ., Լ., Ուժ., Դ.Բ., Աղ., Տ.), **բէ/իղի կաղնէմ վ ը չ**

(Եղ.,Կղ.,Ս.,Ն.Յ.), Գորիսի խոսվածքներում **պի/էտի կաղնէմ վէչ, կաղնիլ պիտէմ վէչ, պի/էտի չըկաղնէմ, կաղնիլ չըպէտի**: Կարծում ենք՝ չ-ով ձևերի առկայությունը Գորիսի տարածքային տարբերակներում պայմանավորված է Արարատյան բարբառի ներգործությամբ:

⁵¹⁶ Այդ մասին տե՛ս նաև **Մարգարյան Ա.**, նշվ. աշխ, էջ 212:
315

Քննության ենթակա բարբառային գոտու լեզվական միավորների համար խոսվածքային հատկանիշ կարելի է ընդունել նաև արգելական հրամայականի դրսևորումը: Կապան-Գորիս տարածաշրջանի բարբառային միավորներում արգելական հրամայականը եզակի թվում ունենում է ժխտական **մի, մա, մե** (<մի) բառ-մասնիկները, իսկ հոգնակիում՝ **մաք, միք, մեք**, որոնք ևս հետադասվում են բայաձևին:

Գորիսի խոսվածքներում և դրանց ազդեցությունն ունեցող խոսվածքներում (Աղ., Դ.Բ., Տ.), նաև՝ Քաջարանում առկա են անհնչունափոխ **մի, միք** բառ-մասնիկները, ինչպես՝ *կանչի՛ մի-կանչի՛ միք* և այլն: Կապանի **Ում** ճյուղի խոսվածքներում ընդհանրական են **մա, մաք** մասնիկները, օր.՝ *փրթալէ՛ մա-փրթալէ՛ մաք*, սակայն ճափի և Շիկահող խոսվածքներում գործածական են նաև դրանց քմային տարբերակները՝ *մա՛, մա՛ք*, այսպես՝ *պի ըցրաննա՛ մա-պի ըցրաննա՛*

մա՛ք և այլն. **մի**-ի այս հնչատարբերակների առկայությունը բացատրելի է Մեղրու բարբառի ազդեցությամբ⁵¹⁷, այլ ոչ թե այլ լեզուների: Իսկ (**ԼԻ**)Ս ճյուղի լեզվական մնացորդները պահպանած վերոնշյալ բարբառային միավորներում կիրառվում են **մե, մեք** բառ-մասնիկները, ինչպես՝ *հըսէ՛ մե, խօսա՛ մեք* և այլն: Նկատելի է, որ արգելական մասնիկը շեշտ չի կրում, սակայն որոշ կառույցներում, երբ կորցնում է իր ձայնավոր հնչյունը և միանում բառարմատին, կարող է տրամաբանական շեշտ ստանալ, ինչպես՝ *տի մա՛րա/մա՛րեք «այդպես մի՛ արա/արեք», տի մա՛սե/մա՛սեք «այդպես մի՛ ասա/ասացեք»*: Ի տարբերություն արգելականի այս կազմություններին՝ Գորիսի տարածքային տարբերակներում առկա են նաև անորոշ դերբայով ու հետադաս **մի**-ով քերականական կառույցներ, որոնցում «եզակի թվում անորոշի լ-ն դրափոխությամբ անցել է արգելականին, իսկ վերջինիս **մ**-ն՝ նրա տեղը. հոգնակի թվում էլ մի կողմից եզակի ձևերի նմանողությամբ, մյուս կողմից արգելականի (**միք**-ի) **մ**-ի առնմանությամբ անորոշի լ-ն ևս դարձել է **մ**»⁵¹⁸, օր.՝ *նըստի՛լ մի>նըստո՛ւմ իլ, նըստի՛լ միք>նըստո՛ւմ միք, լիցիցնի՛լ մի>լիցիցնո՛ւմ իլ* և այլն: Անորոշ դերբայի և **մի**-ի տարբերակների հարադրությամբ արգելականի ձևերը հատուկ են Ղարաբաղի բարբառին⁵¹⁹: Գորիսի խոսվածքներում ժխտականի այս կառույցներում ևս տրամաբանական շեշտի տեղափոխությամբ ձայնավորասկիզբ բային նախորդելիս **մի**-ի ձայնավորը սղվում է, օր.՝ *տրիէնց մձանիլ, ճո՛ւր մձօփիլ* և այլն: **Մի**-ի ձայնավորի սղում է առկա նաև Ղարաբաղի և Հաղրուօթի բարբառային միավորներում⁵²⁰: Խոսվածքային առանձնահատկություն է նաև այն, որ Գորիսի տարածքային տարբերակների բայական համակարգերի ժխտական խոնարհման հարացույցում համադրական եղանակաժամանակաձևերից անցյալ կատարյալը և ըզձականի ժամանակաձևերը գործառվում են և՛ հարադրությամբ, և՛ **չ**-ի համադրմամբ:

Եթե երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը Գորիսի խոսվածքներում սահմանափակ դրսևորումներ ունեն, ապա Կապանի տարածաշրջանի խոսվածքները հատկանշվում են դրանց՝ առավել հաճախադեպ կիրարկություններով, ինչով վերջիններս նման են Ղարաբաղի ու Հաղրուօթի բարբառային միավորներին⁵²¹: Կապան-Գորիս բարբառային գոտու խոսվածքներում երկրորդական բաղադրյալ ժամանակները կազմավորվում են անկատար, ապառնի, հարակատար դերբայների և **ինել** (<ինեել)/**իլել** (Գոր. խոս.-ները)/**(ի)նիլ** (Կապ.) բայի խոնարհաձևերի հարադրությամբ. իբրև այդպիսիք Գորիսում առկա են հիմնականում **լ՛նլ, ն՛րլ մ**,

⁵¹⁷ Տե՛ս Աղայան Է., նշվ. աշխ., էջ 199:

⁵¹⁸ Մարգարյան Ա., նշվ. աշխ., էջ 214:

⁵¹⁹ Այդ մասին տե՛ս Դավթյան Կ., նշվ. աշխ., էջ 183:

⁵²⁰ Տե՛ս նաև Դավթյան Կ., նշվ. աշխ., էջ 184, Սարգսյան Ա. Յու., նշվ. աշխ., 2009, էջ 59:

⁵²¹ Մանրամասն տե՛ս Դավթյան Կ., նշվ. աշխ., էջ 195-197, Պողոսյան Ա. Մ., Հաղրուօթի բարբառ, Ե., 1965, էջ 194-203:

Կապանում **լ'Ալ**, **նՌւ մ**, **լ'Ած**, **նիս**: Չայտնի է, որ երկրորդական բաղադրյալ ժամանակները, հարաբերվելով գլխավոր ժամանակներին, «...կատարվող, կատարված, կատարելի կերպերի համապատասխան տևական ընթացային գործողություն կամ եղելություն...»⁵²² են արտահայտում ունենալով իմաստային այնպիսի երանգ, որն «...ընդունված է անվանել *շարունակականություն*»⁵²³: Ըստ Ա. Ղարիբյանի՝ բայի շարունակական ձևը ցույց է տալիս գործողության շարունակական, տևական կամ ընթացքի մեջ լինելը⁵²⁴: Ինչպես Չաղրուօթի, այնպես և քննվող տարածաշրջանի միայն **ԼԻՍ** ճյուղի բարբառային միավորներում են ընթացակցական դերբայից կազմավորվում շարունակական ներկա ու անցյալ ժամանակաձևեր, օր.՝ **ներկա՝ լըսէլավ ըմ չ'Ալ**, **անցյալ՝ լըսէլավ ի չ'Ալ**// **լըսէլավ ի նիս** և այլն, ընդ որում նկատելի է, որ քերականական մեկ իմաստն արտահայտվում է երկու բաղադրյալ կազմությամբ: Ի տարբերություն Կապանի տարածքային մի շարք տարբերակների բայական համակարգերի՝ Գորիսի խոսվածքներում **(հ)լ'Ալ** -ի և **-ու/Ռւ մ** վերջավորությամբ անկատար, ապառնի, հարակատար դերբայների հարադրությամբ քերականական կաղապարները (օր.՝ **տեսնում են լ'Ալ(լ)**, **տեսնալու վա լ'Ալ(լ)**, **տեսած էք լ'Ալ(լ) ...**) արտահայտում են երկրորդական բաղադրյալ ժամանակների իմաստներ: Իսկ Կապանի այն խոսվածքներում, որոնցում բացակայում են օժանդակ բայի անցյալի դիմաթվային ցուցիչներով հարադրված հիմնական եղանակաժամանակային ձևերը, ինչպես իրավացիորեն նշում է Ժ.Միքայելյանը, «...բաղադրյալ երկրորդական ժամանակները, առաջնալով գլխավորներին զուգահեռ, ստեղծում են կերպաժամանակային նոր իմաստներ...»⁵²⁵ և փոխարինում գլխավորներին: Եթե Կապանի տարածաշրջանի բարբառային այս միավորների բայական համակարգերում **(հ)նիլ**-ի խոնարհաձևերով և **ոււմ**-ով անկատարով կառույցները ներկայացնում են հետևյալ պատկերը. **ներկա՝ լըսում ա ԳՌւմ**, **անց. անկատ.՝ լըսում ա չ'Ալ ԳՌւմ**, **ըղծ ապ.՝ լըսում նի, ենթ. ապ.՝ լըսում կի/ընի, հարկ. ապ.՝ լըսում պը/խոի նի**, ապա Գորիսի խոսվածքներում **-ոււմ**-ով անկատարը զուգորդվում է միայն **(հ)լ'Ալ** -ին՝ ձևավորելով վաղակատար ու անցյալ վաղակատար երկրորդական բաղադրյալ ժամանակներ⁵²⁶, օր.՝ **քանդում ես (հ)լ'Ալ**, **քանդում իր (հ)լ'Ալ** և այլն: Ինչպես Սյունիք-Արցախի բարբառային գոտու լեզվական միավորներում, այնպես և քննվող բոլոր խոսվածքներում **-իս/ս**-ով դերբայով և **լինել** բայի խոնարհաձևերի բարբառային տարբերակների քերականական կառույցներով արտահայտում են զրեթե բոլոր եղանակների, բացառությամբ հրամայականի, երկրորդական բաղադրյալ ժամանակներ:

Իս-ով անկատարով, **-ական** վերջավորությամբ ապակատարով և **լ'Ալ** կամ **նիս** հարադրությամբ, նաև այդ երկու բառ-մասնիկների զուգորդությամբ որոշ կազմություններ բնորոշ են միայն **ԼԻՍ** ճյուղի խոսվածքներին: Այդօրինակ լեզվական իրողություն է անցյալ հարակատարի բաղադրյալ ձևը, որով այս բարբառային միավորները նմանվում են Չաղրուօթի բարբառին:

Իս-ով անկատարի հետ նկատելի են զուգաձևություններ, ինչպես՝ **ներկա՝ հըսնէլիս էմ ի ԳՌւմ** // **ի չ'Ալ (Գոր.)**, **հըսնէլիս ըմ ԳՌւմ** // **լ'Ալ (Կապ.)**, **հըսնիս ըմ նիս** //

⁵²² Մարգարյան Ա., Չայոց լեզվի քերականություն, Ձևաբանություն, Ե., 2004, էջ 457:

⁵²³ Միքայելյան Ժ., Բայի երկրորդական ժամանակները Ղարաբաղի բարբառում, Չայոց լեզվի պատմության հարցեր, Միջազգային հայերենագիտական ութերորդ գիտաժողովի զեկուցումներ, Ստեփանակերտ, 2008, էջ 52:

⁵²⁴ Ղարիբյան Ա., նշվ. աշխ., էջ 181:

⁵²⁵ Միքայելյան Ժ., նշվ. աշխ., էջ 52:

⁵²⁶ Տե՛ս նաև Մարգարյան Ա., նշվ. աշխ., 1975, էջ 223:

լիակ (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **անց. անկատ.**՝ հրսնէլիս ի **ԻՄԻԼԸ** //ի լիակ (Գոր.), հրսնէլիս ըմ լիակ **ԻՄԻԼԸ** (Կապ.), հրսնիս ի լիակ (Ն իս) //հրսնիս ըմ լիակ նիս (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **ապառնի**՝ հրսնէլիս էմ **ԻՄԻԼԸ** //ի լիակ (Գոր.), հրսնէլիս ըմ **ԻՄԻԼԸ** (Կապ.), հրսնիս ըմ իննական (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **անց. ապ.**՝ հրսնէլիս ի **ԻՄԻԼԸ** (Գոր.), հրսնէլիս ըմ լիակ **ԻՄԻԼԸ** (Կապ.), հրսնիս ի իննական (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **վաղ.**՝ հրսնէլիս էմ ի լիակ (Գոր.), հրսնէլիս ըմ լիակ (Կապ.), հրսնիս ըմ լիակ (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **անց. վաղ.**՝ հրսնէլիս ի **իլիակ** (Գոր.), հրսնիս ի լիակ (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **հար.**՝ հրսնէլիս ըմ լիակ (Կապ.), հրսնիս ըմ լիակ (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **անց. հար.**՝ հրսնիս ի լիակ //հրսնիս ըմ լիակ (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **անց. կատ.**՝ հրսնէլիս **իլիակ** (Գոր.), հրսնիս լիակ (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **ըղծ. ապ.**՝ հրսնէլիս ինէմ (Գոր.), հրսնէլիս նիմ (**ԻՄԻԼԸ**) (Կապ.), հրսնիս ինիմ (լիակ) //հրսնիս ինիմ նիս (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **ըղծ. անց. ապ.**՝ հրսնէլիս ինի (Գոր.), հրսնիլիս ինի (Տթ.), հրսնէլիս ըմ **ԻՄԻԼԸ** լիակ //հրսնէլիս նիմ լիակ (Կապ.), խըսիս ինի (լիակ) (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **ենթ. ապ.**՝ հրսնէլիս կինէմ (Գոր.), հրսնէլիս կինիմ (**ԻՄԻԼԸ**) (Կապ.), հրսնիս կինիմ (լիակ) //հրսնիս կինիմ նիս (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **ենթ. անց. ապ.**՝ հրսնէլիս կինի (Գոր.), հրսնէլիս կինիմ լիակ (Կապ.), հրսնիս կինի (նիս) //հրսնիս կինի լիակ (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **հարկ. ապ.**՝ հրսնէլիս պէտի ինէմ (Գոր.), հրսնէլիս պը/իտի նիմ (Կապ.), հրսնիս բիդիմ ինիս //հրսնիս բիդիմ լիակ (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **հարկ. անց. ապ.**՝ հրսնէլիս պէտի ինի (Գոր.), հրսնէլիս պը/իտի նիմ լիակ (Կապ.), հրսնիս բիդի ինիս // խըսիս բիդի լիակ նիս (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.) և այլն: Բարբառային նյութի դիտարկումից ակներև է, որ Գորիսի խոսվածքներում բացակայում են հարակատար և անցյալ հարակատար երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը՝ **իս**-ով դերբայի և **լիակ**-ի հարադրմամբ, իսկ Կապանի այն խոսվածքներում, որոնցում կան օժանդակ բայի միայն ներկայի խոնարհիչներ, բացակայում են անցյալ վաղակատարը և անցյալ կատարյալը: Վերոնշյալ օրինակներից նկատելի է նաև, որ Կապանի տարածաշրջանի **ՌԻՄ** ճյուղի խոսվածքներում սահմանականի անցյալի ապառնիս և ըղծականի նույն ժամանակաձևն իրարից տարբերվում են միայն **ԻՄԻԼԸ** և **լիակ** բառ-մասնիկների շարադասությամբ:

Ապառնի դերբայով երկրորդական բաղադրյալ ժամանակները ևս զուգաձևություններ ունեն, այսպես՝ **սահմ. ապառնի**՝ հրսնէլու վըմ **ԻՄԻԼԸ** (Կապ.), հրսըլական ըմ լիակ (նիս) // հրսէլի ըմ լիակ (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **անց. ապ.**՝ հրսնէլու վըմ լիակ **ԻՄԻԼԸ** (Կապ.), հրսըլական ի լիակ // հրսէլի ի լիակ (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **ըղծ. ապ.**՝ հրսնէլու ինէմ (Գոր.), հրսնէլու նիմ (**ԻՄԻԼԸ**) (Կապ.), հրսըլական նիմ (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **ըղծ. անց. ապ.**՝ հրսնէլու ինի (Գոր.), հրսնէլու վըմ **ԻՄԻԼԸ** լիակ, հրսըլական ինի (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **ենթ. ապ.**՝ հրսնէլու կինէմ (Գոր.), հրսնէլու կինիմ (Կապ.), հրսըլական կինիմ (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **ենթ. անց. ապ.**՝ հրսնէլու կինի (Գոր.), հրսնէլու կինիմ լիակ (Կապ.), հրսըլական կինի (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **հարկ. ապ.**՝ հրսնէլու պէտի ինէմ (Գոր.), հրսնէլու պը/իտի նիմ (Կապ.), հրսըլական բէդի նիմ (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **հարկ. անց. ապ.**՝ հրսնէլու պէտի ինի (Գոր.), հրսնէլու պը/իտի նիմ լիակ (Կապ.), հրսըլական բէդի ինի (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.) և այլն:

Ի տարբերություն Գորիսի խոսվածքների՝ Կապանի տարածաշրջանի խոսվածքները, ինչպես նշեցինք, հատկանշվում են հարակատար դերբայով բաղադրյալ կազմությունների կիրառական հաճախականությամբ, քանի որ դրանցում հարակատար դերբայի և **լիակ**-ի, երբեմն էլ **կամ** պակասավոր բայի խոնարհաձևերի հարադրությամբ երկրորդական բաղադրյալ ժամանակներ են առկա գրեթե բոլոր

բայերի եղանակային ձևերից, այսպես՝ **ներկա՝** հրսած ըմ **ՄԻՆԸ**, **անց. անկատ.**՝ հրսած ըմ **ՄԻՆԸ չիլ**, **հար.**՝ հրսած ըմ **չի՛ծ** (Կապ.)//հրսած ըմ **չիլ**, հրսած ըմ **նիս** (**չիլ**)(Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **անց. հար.**՝ հրսած ըմ **չի՛ծ չիլ**(Կապ.)// հրսած ի **չիլ**(Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **սպառնի՝** խօսած//խրսեցած ըմ **ՄՕՂԻԼ**, **անց. սպ.**՝ խօսած//խրսեցած ըմ **ՄՕՂԻԼ չիլ**//**չի՛ծ**, **ըղծ. սպ.**՝ խօսած// խրսեցած **նիմ**, **ըղծ անց. սպ.**՝ խօսած// խրսեցած **նիմ չիլ**//**չի՛ծ**, **ենթ. սպ.**՝ խօսած//խրսեցած **կինիմ**, **ենթ. անց. սպ.**՝ խօսած //խրսեցած **կինիմ չիլ**//**չի՛ծ**, **հարկ. սպ.**՝ պը/իտի խօսած//խրսեցած **նիմ**, **հարկ. անց. սպ.**՝ խօսած//խրսեցած **պը/իտի նիմ չիլ**//**չի՛ծ**, ինչպես և՝ **կյնրթանծ կաս**, **քեցած կաք** և այլն: Հարակատար դերբայի գործառնության ռոբորտը լայն է. **լինել** բայի **խ**-ով անկատարի հետ Կապանի **ՌԻՄ** ճյուղի տարածքային տարբերակներում, բացի Աղվանիում, Դավիթ Բեկում և Տանձավերում, առկա են այլ ժամանակաձևեր, ինչպես՝ **կաղնած նիլիս ըմ ՄԻՆԸ** «կանգնած լինելիս եմ լինում», **կաղնած նիլիս ըմ չիլ** // **չի՛ծ**, **կաղնած նիլիս ըմ ՄՕՂԻԼ**, **կաղնած նիլիս նիմ**, **կաղնած նիլիս կինիմ**, **կաղնած նիլիս պը/իտի նիմ**: Ինչպես մյուս դերբայներով, այնպես էլ հարակատարով կազմված հիմնական ժամանակաձևերն արտահայտում են գործողության կարճատևություն, իսկ երկրորդականները՝ տևականություն, ինչպես՝ «**Թն յես տըր ն մասին խրսեցած նիմ չիլ**//**չի՛ծ**, **մըռնիս**» և այլն: Համամիտ լինելով ժ.Միքայելյանի հետ՝ նշենք, որ Կապան-Գորիս տարածաշրջանի խոսվածքներում ևս բաղադրյալ ժամանակների ձևավորման պատճառներից է տարբեր գործողությունների ժամանակային համադրման անհրաժեշտությունը խոսքում⁵²⁷, օր.՝ «**Թն վըր տու կաղնած նիս հըղըցեն դըրաղեն, տըսած կինիս իՆԼՐԱՆ**, **վըր դաղավ ըս յեկա(ծ)**»(Կապ.), «**Մըն օր հունց ա պըղահում, Երկու հօքի էչ ն վ քին ն յիս ին իՆԼՐԱՆ ճաղացը**»(Գոր., Տղ) և այլն:

Հարկ է հավելել, որ երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերով կազմությունները, որոնք հարստացնում են բանավոր խոսքը կերպաժամանակային ոճավորմամբ, Կապանի տարածաշրջանի խոսվածքներում ավելի շատ են կիրառվում, քան Գորիսի բարբառային միավորներում:

Որոշ բայերի բարբառային համարժեքները հնչատարբերակային են, որոնց առկայությամբ խոսվածքները յուրահատկություններ ունեն. Գորիսի խոսվածքներում առկա **քիցծղ // քիցնացծղ // քացծղ** տարբերակների դիմաց Կապանի

տարածաշրջանի խոսվածքներում գործառնում են **քիցնացծղ // քեցոլ** ձևերը: Գորիսի խոսվածքներին բնորոշ **քիթած** (<գտանել) «գտած» բայաձևին Կապանի

տարածաշրջանի խոսվածքներում իմաստապես համապատասխանում է **ճարած**-ը, իսկ փոխառյալ հարադիր ունեցող **աննալ** (արաբ. ämä) ⁵²⁸ **կնալ** «պատշաճել, ստացվել» բային՝ **տըռնալ** բայը (վերջինս Գորիսի խոսվածքներում առկա է **տունոնալ** հնչատարբերակով): Կապան-Գորիս տարածաշրջանների խոսվածքներում կիրառական տեսակետից տարբերություն են դրսևորում **քաղել** և **քանդել** բայերը: Կան շարահյուսական որոշ կառույցներ, որոնցում գորիսեցին նույն նշանակությամբ օգտագործում է **քանդել**-ը, կապանցին՝ **քաղել**-ը, օր.՝ **մօշը քանդել/քաղել, խի ճծօրը**

քանդել/ խիճծօրը քաղել, բայց Կապանի ու Գորիսի խոսվածքներում

⁵²⁷ Տե՛ս Միքայելյան ժ., նշվ. աշխ., էջ 52:
⁵²⁸ Մարգարյան Ա., նշվ. աշխ., 1975, էջ 503:

«կըրտօշկան//կըրտօպին քանդէլ(Գոր.)// քանդէլ (Կապ.)» արտահայտությունն ընդհանրական է: Գորիսի խոսվածքներում (մասնավորապես՝ Գորիս քաղաք, Վերիշեն) կիրարկվում է բաղարկությամբ առաջացած **հիյիդան**⁵²⁹ «չգիտեմ» բայաձևը, այնինչ

Կապանի տարածաշրջանի խոսվածքներում հանդիպում ենք **հինչ գիդան** (<ինչ գիտեմ) տարբերակով:

Այսպիսով՝ բարբառային նյութի դիտարկմամբ պարզվում է, որ համաժամանակյա կտրվածքում Կապան-Գորիս տարածաշրջանի խոսվածքները զգալի փոփոխություններ են կրել: Հետազոտության առարկա բարբառային միավորները կարելի է դասակարգել ըստ բայական համակարգերի յուրահատկությունների, որոնք ընդունել ենք որպես խոսվածքային հատկանիշ: Պայմանավորված հասարակական, տնտեսական ու մշակութային կյանքի փոփոխություններով, ինչպես և լեզվական ներգործություններով՝ այդ տարածքային տարբերակների բայական համակարգերում ձևավորել են կիրառական մի քանի առանձնահատկություններ, որոնք դրևորվում են տարեց ու երիտասարդ բարբառակիրների խոսքում: Եթե Կապանի **ԼԻՍ** ճյուղի և Գորիսի խոսվածքների բայական համակարգերում գործուն են բոլոր եղանակաժամանակային ձևերը, ապա Կապանի **ՈւՄ** ճյուղի մի խումբ խոսվածքներում դրանցում առկա է իմաստային տարարժեքություն: Կապանի տարածաշրջանի **ԼԻՍ** ճյուղի խոսվածքները, «...հանդիպելով «ում» ճյուղի Ղարաբաղի բարբառին, ուժեղ ազդեցության ենթարկվելով՝ բավականին ազդվել են նրանից՝ որոշ ձևափոխությամբ պահպանելով «ս» ճյուղի...»⁵³⁰ տարբերակիչ հատկանիշները: Սյունիք-Արցախ տարածաշրջանում վերաբնակված ներգաղթածների խոսակցական տարբերակները ևս իրենց հերթին որոշակիորեն ներգործել են **ՈւՄ** ճյուղի բարբառային միավորների վրա, որով էլ բացատրելի է քերականական զուգաձևությունների առկայությունը նույն խոսվածքում: Սույն աշխատանքով փորձել ենք ներկայացնել քննվող տարածաշրջանի խոսվածքների բայական համակարգերի՝ հնարավորիս ամբողջական պատկերը՝ կարևորելով այն հանգամանքը, որ մեր ուսումնասիրած լեզվական երևույթները հայերենի կենդանի բարբառային միավորների առանցքային ու եական իրողություններ են, որոնք ժամանակի հիշվույթում անփոփոխ չեն մնացել:

A COMPARATIVE EXAMINATION OF THE VERB SYSTEMS OF THE SPEECHES (DIALECTS) OF KAPAN-GORIS AREAS

SVETALANA MANUCHARYAN

*Member of the Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA),
Goris State University, acting dean of Humanities and social sciences, Ph.D in
Philological Sciences, Assistant, lecturer at the department of Armenian Language and
Literature of Goris State University,
Goris, Republic of Armenia*

Kapan-Goris areas, as a dialectical zone are characterized by the manners of speech belonging to the branches *lis* [LɪʰU] and *oom* [Ōɪ ɯ]. We have already examined the dialectical units of the verb systems of this area with synchronic consideration by representing

⁵²⁹ Օրինակը տե՛ս Մարգարյան Ա., նշվ. աշխ., էջ 112:

⁵³⁰ Դավթյան Կ., նշվ. աշխ., էջ 235:

their unique peculiarities with the application of a comparative method. The speeches under the examination possess a range of characteristics according to present and past tense displays of the conjugation indicators. As far as it concerns the expression of the tense and the meaning of the Past Simple the dialectic units of Kapan-Goris can be divided into two groups: synthetic and analytic. In the speeches belonging to the latter group some past tenses of Subjunctive and Conditional lack. The speeches under consideration are also differentiated according to the formation of compulsive mood, the expression of the negative Imperative, the application of secondary compound tenses, as well as the tense-mood dialectical variants of irregular verbs. All the mood tenses are applicable in the verb systems of the “LIS” branch of Kapan and Goris Dialect, whereas in a range of dialects of “UM” branch of Kapan they are used with double/various definitions. It should be noted, that currently, by the examination of the dialectical material, the dialects in Kapan-Goris area can be classified according to the verb system peculiarities that we have observed as a speech characteristic.

Key words: *the dialectical units of Kapan-Goris area, a comparative examination, Verb Systems of the speeches, Parallal method, a dialect characteristic, the branches “UM” and “LIS”, a dialectical zone.*

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ КАТЕГОРИЙ ГЛАГОЛА В ГОВОРАХ РЕГИОНА КАПАН-ГОРИС

СВЕТЛАНА МАНУЧАРЯН

*Член Объединения молодых ученых и специалистов Арцаха (ОМУСА),
врио декана факультета гуманитарных и социальных наук, лектор кафедры
армянского языка и литературы Горисского государственного университета,
кандидат филологических наук, ассистент,
г.Горис, Республика Армения*

Регион Капан-Горис, как диалектный пояс, характеризуется говорами, относящимися к ветвям (ЛИ) С и Ум. Категории глагола диалектных единиц этого региона мы разбирали в синхронном порядке, применяя сравнительный метод, представили их особенности. Говоры, подлежащие исследованию, имеют целый ряд особенностей, исходящих из выражения временных форм глаголов настоящего и прошедшего времени при спряжении. Диалектные единицы региона Капан-Горис по выражению прошедшего совершенного времени можно разделить на две группы: синтетического и аналитического образования. В относящихся ко второй группе говорах в желательном и предположительном наклонениях отсутствуют отдельные временные формы прошедшего времени. Исследуемые говоры различаются также по образованию наклонения принуждения, по выражению категорического запрета, применению придаточных составных временных форм, как и диалектными вариантами выражения наклонения и времени неправильных глаголов. В глагольных категориях ветви (ЛИ)С Капана и говоров Гориса действуют временные формы всех наклонений, а в ряде говоров ветви Капана они применяются в разных смысловых значениях. При анализе диалектного материала видно, что на современном этапе говоры региона можно классифицировать по тем особенностям категорий глагола, которые мы рассматривали как свойство говора.

Ключевые слова: *диалектные единицы региона Капан-Горис, сравнительный анализ, глагольные системы говоров, сопоставительный метод, свойство говора, ветви Ум и (ЛИ)С, диалектный пояс.*